

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

«27» « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրենի «29» « 12 » 2016 թ.

թիվ 496 հրամանով

[Handwritten signature]

[Handwritten signature]



« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

83 v

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Որակի ապահովման և բարելավման գործընթացները միտված են նաև ուսանողների կարողությունների և հմտությունների գնահատման համակարգի արդյունավետության գնահատմանը և բարելավմանը: ՌԻսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ: Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է կարողությունների և հմտությունների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որոնք ենթադրում են մի շարք փոփոխությունների իրականացում ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջում ուսանողի գնահատման հիմնական նպատակներն են՝

- հավաստել, որ ուսանողը ձեռք է բերել որակավորման առնչվող գիտելիք, հմտություն և կարողություն,
- որոշարկել ուսանողի գիտելիքի կամ հմտությունների բացերը, ինչը հնարավորություն կտա նրան անցնել անհրաժեշտ լրացուցիչ ուսումնառություն:

II. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1 ԳՏՊԹ-ում գործում է կարողությունների և հմտությունների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում կարողությունների և հմտությունների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ) անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի կարողությունների և հմտությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

2.2 Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատրաստվածության մակարդակին

ներկայացվող պահանջները պետք է ապահովեն կարողությունների և հմտությունների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

2.3 Հանրագումարային ստուգումները (քննությունները և ստուգարքները) նպատակ ունեն

գնահատելու տվյալ կիսամյակում ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, դրանց կայունությունը, ուսանողի ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեռքբերումը, ստացած կարողությունների և հմտությունների համադրումը և դրանց կիրառումը գործնական խնդիրների լուծման ժամանակ:

2.4 Ընթացիկ ստուգումը կիսամյակի ընթացքում մոդուլի ուսումնասիրված արդյունքների

յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է, որի կիրառումը՝

ա) նպաստում է առարկայից առավել կայուն գիտելիքների տիրապետմանը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի միջոցով,

բ) դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնելու մաս առ մաս,

գ) բարձրացնում է ուսանողի ուսումնական կարգապահությունը:

2.5 Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների, ստուգարքների և քննությունների

անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

2.6 Ընթացիկ և հանրագումարային ստուգումների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան ամբիոնների կողմից:

2.7 Կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,

գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում-

գնահատում,

դ) կրթական մոդուլի արդյունքների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ և հանրագումարային քննություններ կամ ստուգարքներ),

ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

III. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ անփոփիչ ստուգման կազմակերպման ձևի լինում են.

ա) քննությամբ ավարտվող դասընթացներ,

բ) ստուգարքով ավարտվող դասընթացներ:

Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերը ամրագրվում են մասնագիտության

ուսումնամեթոդական փաթեթում:

3.2 Քննություններով ավարտվող առարկաների ցանկը որոշում է տվյալ ամբիոնի ցիկլային հանձնաժողովը:

3.3 Ստուգաբքով եզրափակվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով ամփոփվող ստուգաբքով:

3.4 Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր-բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ:

3.5 Ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների արդյունքների ամփոփման ու ներկայացման ձևը հաստատվում է համապատասխան ամբիոնում:

Ուսանողները լաբորատոր աշխատանքները կատարում են տվյալ դասընթացը վարող դասախոսի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ:

3.6 Քննությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի.

ԲԱՂԱԴՐԻՉ/ՄԻԱՎՈՐ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄ
9-10	Առաջադրանքն ամբողջությամբ, առանց կամ գրեթե աննկատ բացթողումներով կատարված է
7-8	Առաջադրանքը կատարված է, սակայն կան որոշ

	թերություններ
5-6	Առաջադրանքը կատարված է, սակայն կան նկատելի բացթողումներ
3-4	Առաջադրանքը թերի է կատարված
1-2	Առաջադրանքից ինչ-որ բան կատարված է կամ կատարված չէ

3.7 Ընթացիկ /տարբերակված/ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 10 բալանոց համակարգով:

Ստուգման արդյունքները գրանցվում են ստուգարքների տեղեկագրում:

3.8 Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունները և կարողությունները նույնպես գնահատվում է 10 բալանոց համակարգով և գրանցվում համապատասխան տեղեկագրերում:

3.9 Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և (կամ) անհատական պարապմունքներ՝

ըստ ժամանակացույցի:

3.10 Պրակտիկական գնահատվում է քննության ձևով՝ 10 բալանոց սանդղակով՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի կողմից սահմանված չափանիշների: Ուսումնական կամ

արտադրական պրակտիկաների կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է ԳՏՊԲ-ի

«Պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կանոնակարգով:

3.11 Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման

մասին» կարգի (հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. հուլիսի 21-ի N 638-Ն հրամանով):

IV. Գնահատման առաջադրանքը

Կարողությունների գնահատման արդյունավետությունը և արդյունքների որակը զգալի չափով պայմանավորված է այդ նպատակով ուսանողին հանձնարարվող գնահատման առաջադրանքով: Գնահատման առաջադրանքի մշակման համար հաշվի են առնվում մի քանի կարևոր հանգամանք.

ա/ առաջադրանքը ձևակերպվում է առավելագույնս հստակ և արտահայտումն է տվյալ արդյունքով նախատեսված նպատակները,

բ/ առաջադրանքը ներառում է այնպիսի գործողություններ, որոնց կատարումը մտնում է այդ մասնագետի մասնագիտական պարտականությունների մեջ,

գ/ առաջադրանքը ներառում է տարբեր փոփոխական իրավիճակներում տվյալ գործողությունը կատարելու ուսանողի ձեռք բերած կարողության ցուցադրումը,

դ/ առաջադրանքը ապահովում է գործողության կատարման արդյունքում գնահատման համար հիմք ընդունվող վավերացման ստացումը,

ե/ գնահատման առաջադրանքը կատարելու համար տևական ժամանակ չի պահանջվում: Եթե առաջադրանքն այնպիսին է, որ համենայնդեպս այն կատարելու համար տևական ժամանակ է պահանջվելու, կարելի է այդպիսի դեպքերի գնահատումը կատարել փուլերով, ուսումնառության ընթացքում:

Գնահատման առաջադրանք մշակելու ժամանակ ուշադրություն է դարձվում մոդուլային ծրագրի մեջ ներկայացված գնահատման միջոցների մանրամասներին:

Գնահատման առաջադրանքն ուսանողին տրվում է համապատասխան թերթիկներով, որոնց վրա ուսանողը կատարելու է անհրաժեշտ հաշվարկներ, լրաց- նելու է թեստը և այլն: Եթե գնահատման համար հիմք ընդունվող առաջադրանքը կատարելով ուսանողը պատրաստելու է որևէ արտադրանք, ապա նման առաջադրանքի համար գնահատման թերթիկ կազմվելու է միայն կատարվելիք առաջադրանքի վերաբերյալ համապատասխան հանձնարարականների տեսքով:

V. Ուսանողի տեղեկացվածությունը գնահատման ձևին և առաջադրանքի բնույթին

Ուսանողները նախապես տեղեկացված են լինում ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար իրենց կողմից կատարվելիք առաջադրանքի բնույթին: Խոսքը չի վերաբերում առաջադրանքի մանրամասներին, այլ միայն բնույթին:

VI. Գնահատմանը տրամադրվող ժամանակը և պարբերականությունը

Գնահատման առաջադրանքը ուսանողները կատարում են համապատասխան դասաժամերի ընթացքում: Քանի որ որևէ կարողության ձևավորումը տեղի է ունենում քայլ-քայլ, ուրեմն ըստ այդ քայլերի արդյունքների ձեռքբերման էլ ուսանողները գնահատվում են: Գնահատման նպատակով առաջադրանքներ կատարելու պարբերականությունը որոշում է դասախոսը՝ հաշվի առնելով կարողության ձևավորման քայլերի բնույթը: Գնահատման յուրաքանչյուր քայլի արդյունքը գրանցվում է գնահատման թերթիկի վրա և ամփոփ թերթում:

VII. Կարողության գնահատման արդյունքի ամփոփումը, կիրառվող նորմաները

Կարողության գնահատման նպատակով իրականացված գործընթացի արդյունքի ամփոփումը կարևոր նշանակություն ունի ձեռքբերված կարողության ամրագրման և ուսումնառության արդյունքի գրանցման համար: Միայն գնահատման արդյունքն ամփոփելուց հետո կարելի է համարել, որ պահանջվող նպատակն ապահովված է: Գնահատման արդյունքն ամփոփելու համար գոյություն ունի 2 մոտեցում.

ա/ այն դեպքում, երբ տվյալ գործողության համար սահմանված է կատարման միասնական նորմա, ապա արդյունքն ամփոփելու համար պետք է հիմք ընդունվի այդ նորմը:

բ/ այն դեպքում, երբ գնահատման առաջարկվող առաջադրանքի վերաբերյալ նման նորմ սահմանված չէ, ուսումնական հաստատությունը ինքն է նախապես սահմանում այն: Եթե գնահատման առաջադրանքը տրված է թեստի տեսքով, ապա ուսումնական հաստատությունը կարող է դրա համար սահմանել, որ առաջադրանքը համարվելու է կատարված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստի առաջադրանքի, ենթադրենք, առնվազն 85 տոկոսին:

Ուսանողները գնահատման ամփոփման նորմերին ծանոթանում են նախապես:

VIII. Կրկնակի գնահատման անցկացումը

Այն դեպքում, երբ ուսանողն առաջին անգամ բավարար մակարդակով չի կատարում տրված առաջադրանքը և տվյալ արդյունքի գնահատում չի անցնում, կատարվում է արդյունքի կրկնակի հանձնում: Կրկնակի հանձնման ժամանակ կարող է նաև գնահատման առաջադրանքը չփոխվել, կամ փոխվել միայն հանձնարարականի մեջ տրված տվյալների տարբերակը, բայց ոչ դրա բնույթը: Անկախ նրանից, թե այս առաջադրանքը կատարվում է առաջին թե երկրորդ անգամ՝ բոլորովին նրա բովանդակության վրա չի ազդում, թվերը կարող են փոխվել: Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ այստեղ դիտարկվող կրկնակի գնահատումը ոչ մի կապ չունի գնահատականը բարձրացնելու նպատակով իրականացվող վերահանձնման հետ:

IX. Գնահատման արդյունքի արձանագրումը

Կարողությունների գնահատման համար տրված առաջադրանքի կատարման արդյունքը գրանցվում է «անցել է» կամ «չի անցել» ձևով: Գնահատման թերթիկներում, արդյունքների ամփոփման թերթիկում տրված են այդ ձևակերպումները: Կարողության ցուցադրումը կարող է լինել կամ դրական, կամ՝

բացասական: Ուսանողները պետք է ամեն օր պատրաստ լինեն դասերին, պատրաստեն զեկու- ցումներ ու ռեֆերատներ, պատասխանեն սեմինար պարապմունքների ընթացքում, կատարեն ստուգողական աշխատանքներ և այլն: Կարողությունների գնահատումը չի փոխարինում գիտելիքի գնահատմանը, այնպես, ինչպես գիտելիքի գնահատումը չի կարող փոխարինել կարողության գնահատմանը: Դրանք փոխըրացնում են միմ- յանց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Սահրադյան, Երևան 2015, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն, «Կարողություններին միտված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման ուղեցույց»: